ՊԱՏՄԱՔԱՆԱՍԻՐԱԳԱՆ

ԱՎԵՏԻՍ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՎԱՐԴԱՆԱՆՑ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին եւ համայն հայ ժողովուրդը, ինչպես Մայր Հայրենիքում, այնպես էլ Սփյուռքում ամեն տարի համազգային մեծ հանդիսությամբ նշում են Սրբոց Վարդանանց խորհրդանշական տոնը՝ որպես հայրենապաշտության, ասպվածապաշտության եւ հայ քրիստոնեական ոգու պատմական հաղթանակի տոն:

Պարսկական գերիշխանության դեմ խղճի ազատության, ազգային ինքնուրույնության եւ հայրենի հողի փրկության համար ծավալված Վարդանանց պատերազմն իր նշանակությամբ իրապես բացառիկ է հայոց ազատամարտերի պատմության մեջ, քանի որ հայոց գենքը, հավատքը, ոգին եւ միտքը միավորվել են, սրբացվել եւ դարձել Հայրենիքի, Ազգի եւ կրոնի համար մղված պայքարի խորհրդանիշ:

Վարդանանք պատմության մեջ մտան որպես աննկուն հավատի, անմար հայրենասիրության վեհ գաղափարների նկատմամբ անսպառ նվիրում ու օրինակելի հետեւողականություն ունեցող հերոսներ:

Ժամանակը ոչ միայն չի մթագնել, այլ ընդհակառակը, ավելի վեհացրել ու արժեւորել է նրանց պայծառ հիշատակը սերունդների հիշողության մեջ եւ, ժամանակին ժողովրդին մղելով հերոսության, մատնանշել «իմացեալ մահով անմահանալու ճամբան» (Գ. Նժդեհ):

Հայ Առաքելական Ս. Եկեղեցին սրբացրեց Հայրենիքի եւ Հայ Եկեղեցու համար նահատակված Ավարայրի 1036 հերոսների (այդ թվում 9 նախարար, 740 հոգի անազատների դասից եւ 287 հոգի ազատների դասից) խնկելի հիշատակը, որոնց թվում էին, ըստ Եղիշեի, Մամիկոնյան ցեղից Քաջ Վարդանը՝ 133 մարդով, Խոռխոռունյաց ցեղից Կորովի Խորենը՝ 19 մարդով, Պալունյաց ցեղից Արի Արտակը՝ 57 մարդով, Գնթունյաց ցեղից Զարմանալի Տաճատը՝ 19 մարդով, Դիմաքսյան ցեղից Իմաստուն Հմայակը՝ 22 մարդով, Քաջբերունյաց ցեղից Հրաշակերտ Ներսեհը՝ 7 մարդով, Գնունյաց ցեղից Մանուկ Վահանը՝ 3 մարդով, Ընծայնոց ցեղից Արդար Արսենը՝ 7 մարդով, Սրվանձտյանց ցեղից Հառաջադեմ Գարեգինը՝ 2 հարազատներով եւ 18 մարդով, ինչպես նաեւ Ղեւոնդյան սրբակրոն հոգեւորականները, որոնք ըստ Ներսես Շնորհալու շարականի «վարդա-

գոյն արեամբ իւրեանց պսակեցին զեկեղեցի»: Եկեղեցին հատուկ տոն սահմանեց, որը լայն տարածում գտավ ժողովրդի մեջ եւ ձեռք բերեց պաշտպամունքային նշանակություն:

Ե. դարի ազատագրական շարժումների եւ մասնավորապես Վարդանանց պատերազմի խնդրի վերաբերյալ խոսվել եւ գրվել է ավելի քան 1500 տարի: Այդ առիթով տարբեր ժամանակներում ստեղծվել է բավականին ստվար գրականություն եւ տրվել են տարբեր, երբեմն նաեւ իրարամերժ գնահատականներ: Սակայն Վարդանանց հիմնախնդիրը մեր պատմության այն իրադարձություններից է, որն անսպառ է եւ որին վիճակված է անվերջ վերադարձ:

Եւ այդ ամենը պատահական չէ, քանի որ Վարդանանց ազատագրական պատերազմի ոգեկոչումն իր մեջ կրում է հայ ժողովրդի ազատագրական ոգու անմահության խորհուրդը, որովհետեւ պայքարի նժարին դրված էր Հայ Ազգի եւ Հայ Եկեղեցու պաշտպանության գոյամարտը:

Այո՛, շեշտը դրված է եղել հավատքի վրա, եւ Վարդանանք էլ գերազանցապես ներկայացված են եղել որպես քրիստոնեական հավատի գինվորներ ու նահատակներ:

Վարդանանց համար հայրենասիրությունը սնապարծություն չէր, այլ պատասխանատվություն՝հայրենի երկրի եւ եկեղեցու հանդեպ: Ուստի, հայրենի երկիրն ու եկեղեցին պետք է հանդես գային անքակտելիորեն, ինչպես մարմին ու հոգի:

Վարդանանք, որպես նախնիների փառքի ժառանգորդներ, քաջ գիտակցում էին այն մեծ պատասխանատվությունը, որ նրանք կրում էին ապագա սերունդների առջեւ: Նրանք հայոց ազատարարնչ ոգին եւ իրենց բազկի զորությունը արյամբ եւ արդյամբ ծառայեցրին հայրենիքի եւ քրիստոնեական հավատի ազատությունն անաղարտ պահելու գաղափարին՝ քաջ գիտակցելով, որ «մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ անմահութիւն է: Որ զմահ ոչ գիտէ՝ երկնչի ի մահուանէ, իսկ որ գիտէ զմահ, ո՛չ երկնչի ի նմանէ»:

Հայագետների ճնշող մեծամասնությունը Վարդանանց պատերազմը համարել է ճիշտ, տեղին եւ ժամանակին կատարված պատմական իրադարձություն եւ, դատապարտելով Վասակին, իրավացիորեն մեծարել են Վարդանին, նրան տվել «հերոս», «քաջ» եւ «կարմիր» անունները:

Սակայն պատմաբաններից ոմանք առավել նպատակահարմար են համարել Վասակ մարզպանի քաղաքական իմաստությունը, քան Վարդան սպարապետի անձնազոհ հայրենասիրությունը:

Ցավոք սրտի, այսօր էլ ոչ շատ հաճախ, բայց հրապարակվում են օտարամուտ սնուցում ունեցող աշխատություններ, որոնց հեղինակներն օգտվելով շահութաբեր կերակրապնակներից եւ, սեփական ժողովրդի պատմության վիճահարույց հարցերը դիտարկելով միայն կեղծ անաչառության, ապազգային եւ նույնիսկ թշնամական տեսանկյունից, հանիրավի փորձեր են կատարում Վարդանանց պատերազմը եւ Հայ Եկեղեցու խաղացած դերը մեկնաբանել ծուռ եւ ծայրահեղ հայեցակարգով եւ, միակողմանիորեն աղավաղելով իրական պատմությունը, Վարդանանց դեպքերը փորձում են ներկայացնել որպես իղճուկ ու ողորմելի մի շարժում:

Այդպիսիներին միայն կարելի է հիշեցնել այն խրատական միտքը, որ աշխարհում

իրականում կան մեծ եւ փոքր երկրներ, բայց չկան մեծ եւ փոքր հայրենիքներ: Հայրենիքը միակն է եւ ամենաթանկը, եւ, որ «հայրենիքը,- ինչպես հռոմեացի փիլիսոփա Սենեկան կասեր,- նրա համար չեն սիրում, որ մեծ է, այլ նրա համար, որ մերն է»:

Ավարայրի ճակատամարտը, ի հեճուկս ռազմավարական գնահատման եւ ի տարբերություն հայ զինական արվեստի բազում փայլուն ճակատամարտերի, նախ եւ առաջ յուրահատուկ է իր հեփեւանքային արժեւորման մեջ:

Թերեւս քրիստոնյա ոչ մի ժողովրդի պատմության մեջ որեւէ մի ճակատամարտ այնքան հարազատությամբ չի արտահայտել ազգի քրիստոնեական ոգին՝ իր բովանդակ գաղափարախոսությամբ, որքան Ավարայրի ճակատամարտը, ճակատամարտ, որտեղ կիրառվել են քրիստոնեական գաղափարախոսության ազնվագույն բանաձեւումները:

Արդ, ո՞րն է Վարդանանց պատերազմի խորհուրդը եւ ինչ դասեր կարող ենք մենք քաղել պատմությունից:

Նախ, Վարդանանց պատերազմը հայ ժողովրդի առաջին համաժողովրդական ազատագրական ապստամբությունն էր Սասանյան Պարսկապատանի ու նրա հետ միացած պարսկամետ հայ նախարարների դեմ: Պատերազմը դուրս եկավ համահայկական սահմաններից եւ ձեռք բերեց տարածաշրջանային նշանակություն, քանի որ հայ ժողովուրդն իր ազատագրական պայքարով ձախողեց Տիգրանի կրոնափոխության քաղաքականությունը եւ մի շարք ժողովուրդներ փրկվեցին ձուլման վտանգից:

Միաժամանակ, ոգեղենության պահպանման առումով այն ներկայանում է նաեւ որպես բացառիկ երեւույթ համաշխարհային ազգերի պատմության մեջ՝ դառնալով յուրատեսակ համեմատության խորհրդանիշ: Այսպես, հաճախ Վարդանանց պատերազմի հետ է համեմատվում արաբական խալիֆաթի դեմ իսպանական ժողովրդի մղած ազատագրական պայքարը, իսկ Ավարայրի հետ՝ մոնղոլների դեմ ռուս իշխանների մղած 1380 թ. Կուլիկովոյի եւ 1812 թ. Նապոլեոնի դեմ տված Բորոդինոյի ճակատամարտերը:

Ավելին, ԺԹ. դարում, երբ ռուս հեղինակներն առաջին անգամ թարգմանությունների միջոցով ծանոթացան հայոց պատմությանը, նրանք փորձում էին հայոց պատմության հիշարժան իրադարձություններից առաջին հերթին առանձնացնել հենց Վարդանանց պատերազմի հերոսական դրվագները՝ այն ռուս ընթերցողին ծանոթացնելու եւ ուսուցանելու համար: Այսպես, «Кавказ» թերթի 1853 թ. համարներից մեկում հոդվածագիր՝ Ի. Ելպատովը, իր՝ «Հայաստանը Ե. դարում եւ սպարապետ Վահան Մամիկոնյանը» հոդվածում, խոսելով հավատի համար հայ ժողովրդի մղած պայքարի հանգամանքի մասին, նշում է. «Հազկերտի գահակալությունը խոր վերքեր թողեց թալանված, ավերված ու ուժասպառ եղած Հայաստանին: Սակայն հայերը, որոնք թեեւ քաղաքականապես հարստահարված էին, հոգով արիացան եւ անսասան դարձան իրենց սուրբ հավատի հանդեպ: Շատ փորձություններ տարան նրանք Հազկերտի բռնատիրությունից, սակայն Փրկչի աստվածային ուսմունքի լույսը նրանց սրտերում չհանգեց...»:

Վարդանանց պատերազմը հայ ազգի ոգեղենության արթնացման, նրա քրիստոնեական գիտակցության բարձրացման եւ օտարին չստրկանալու համար մղված մի պատերազմ էր:

Ավարայրը Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցու օգնությամբ հայոց ազգային ոգու անկախության ապահովումն էր եւ հայ ժողովրդի ազատասեր ոգու պատգամը հետագա սերունդներին, քանզի այդ ամենը գաղափարախոսություն էր, մտածողություն եւ գիտակցություն: Վ. Մամիկոնյանը հերոսական մահով կանխատեսելի պարտությունը վերածեց ոգու հաղթանակի: Հայ հերոսական Ոգին նահատակվեց՝ սերունդներին փոխանցելով սուրբ նահատակների Ոգին: Հատկանշական է Եղիշեի այն օրինակը, որ երբ ճակատամարտն ավարտվեց, պարսից զորահրամանատար Մ. Նիսալավուրտը մի բոպե մտածումների մեջ ընկավ եւ, նայելով դիակներով լի դաշտին, խորհեց, թե ինչ շահեց նա արդյոք եւ ինչ կորցրեց: Ճիշտ է, ֆիզիկական հաղթանակը թվում էր թե նրա կողմն էր, բայց բարոյապես պարսից զորավարը տագնապներ էր զգում:

Ավարայրն ըստ էության, նաեւ, հայոց ազգային ինքնության պահպանման սրբացված խորհրդանիշն է, քանի որ հայ ժողովրդի համար քրիստոնեությունը եղել է ոչ միայն կրոն, այլեւ ազգային գոյության միջոց:

Նրա խորքում է թաքնված մեր ժողովրդի գոյատեւման մեծ խորհուրդը, որը համազգային մեծ վտանգների պահերին ճիշտ ըմբռնել, վերարծարծել ու բորբոքել են հետագա ժամանակների հայ ազգային գործիչները:

Բացի այդ, Ավարայրը դարձավ հայ ժողովրդի ոգեշնչման, ազգային հպարտության, պայքարի եւ հաղթանակների, իսկ Վարդան Մամիկոնյանը ոչ թե մահվան, այլ կյանքի խորհրդանիշ:

Հայ ժողովուրդն իր փորձության ժամերին միշտ հետադարձ հայացք է նետել Ավարայրի ճակատամարտին՝ իբրեւ ազատատենչ մաքառումների չգերազանցված օրինակի եւ ոգեւորել իր հերոսներին հայրենանվեր գաղափարներով: Ավարայրը եւ Վարդան Մամիկոնյանն իրենց ամբողջ վեհությամբ հայրենասիրության եւ ազատասիրության ոգով ապրել են դարերի ընթացքում իրականացված մեծ գործերում, խանդավառել եւ պայքարի են կոչել հետագա սերունդներին՝ դառնալով կենսաբանական հիշողություն:

Հետագա 15 դարերի ընթացքում հայ ժողովուրդն իր ֆիզիկական գոյության պահպանման համար բազմաթիվ հերոսամարտեր մղեց, որոնք միշտ իմաստավորվեցին Ավարայրի խորհրդով եւ օրինակով: Այն շարունակվեց մեր պատմության բոլոր ժամանակներում եւ արտահայտվեց Զեյթունի, Սասունի, Վանի, Մուսա լեռան, Սարդարապատի, Բաշ-Ապարանի հերոսամարտերում եւ Արցախյան գոյապայքարում:

Սարդարապատի հերոսամարտի նախօրյակին Երեւանյան զորամասի հրամանատար գեներալ Մովսես Սիլիկյանը հայ ժողովրդին ուղղված իր կոչում հիշելով Ավարայրի պատգամները, նշում էր. «Հայուհիներ՛, հիշեցեք Ե. դարի փափկասուն տիկնանց, որոնք ոգեւորեցին իրենց ամուսիններին դեպի Մեծ Գործը անմահ Վարդանի կռիվների ժամանակ. հետեւեցե՛ք նրանց օրինակներին, եթե չեք ուզում, որ Ձեր պատիվը ոտնակոխ լինի, խրախուսեցեք նրանց եւ արհամարհեցեք այն վախկոտներին...»:

Մեր ժողովուրդն Ավարայրով մշտապես վերանորոգեց իր վսեմագույն զգացումը՝ հայրենասիրությունը: Արդյունքում ծնվեցին նոր Վարդաններ եւ բարեպաշտ ու պանծալի նոր հոգեւորականներ, որոնք քաջության եւ անվեհեր հայրենասիրության նոր

էջեր արձանագրեցին եւ պայքարեցին հայ ժողովրդի եւ Հայ Եկեղեցու ազատության ու անկախության համար:

Ավարայրն ապահովեց Հայ Եկեղեցու անկախությունը, հարատեւությունը եւ ինքնատիպությունը, իսկ Հայոց եկեղեցին դարձավ հոգեւոր ազատության ու անկախության պահապանը:

Վարդանանց փոնի առիթով առավել իմաստավորվում եւ առավել անբակտելիանում են Հայոց պետականության եւ Հայոց Հայրապետության գաղափարների զուգակցումը եւ միասնությունը, որովհետեւ Ավարայրի ճակատամարտը տեղի ունեցավ «վասն հավատոյ եւ վասն հայրենեաց» նշանաբանով եւ այն հոգեւոր առաջնորդող ուժ հանդիսացավ հետագա դարերի ընթացքում:

Ավարայրը տալիս է նաեւ ժամանակի աշխարհաքաղաքական մարտահրավերներին դիմակայելու մշտարթուն զորություն եւ ավյուն, քանի որ Ավարայրը շարունակվում է նաեւ այսօր: Աշխարհաքաղաքական սրընթաց փոփոխությունների մերօրյա ժամանակներում, երբ կազմակերպված փորձ է կատարվում ձեւափոխելու հայի հնամենի հոգեւորմարդաբանական տեսակը, փորձելով նրան դարձնել աշխարհաքաղաքացի, որը ո՛չ ազգ է ճանաչում, ո՛չ Հայրենիք եւ ո՛չ էլ թշնամի, երբ ազգն իբրեւ մարմին եւ հոգի փոշիանում է, մասնատվում եւ տարրալուծվում անդիմության մեջ, ազգային բարոյահոգեբանական նկարագրի համապատկերում չափազանց կարեւորվում է Ավարայրի գոյամարտի վերլուծությունը: Եթե Ե. դ. միայն կրոնաքաղաքական հալածանքն էր Հազկերտի կողմից, ապա այսօր այն դրսից ֆինանսավորվող քաղաքական անկայունության, բազմակուսակցականության գոյության, ընկերային անհավասարության, գենդերային եւ սեռական հավասարությունների եւ աղանդավորության անձեռնմխելիության մթնոլորտ սերմանող հարձակումներն են մեր իսկ հայրենի հողում: Հետեւաբար, այսօր նույնպես հրատապ է Վարդանանց ոգին եւ նրանց օրինությունը:

Ավարայրը եւ Վարդանանք իրենց ամբողջ վեհությամբ Ե. դարից վեր են հառնում, հասնում մինչեւ մեր օրերը, իսկ նրանց ավելի քան 1500-ամյա անմահությունը թարմացնում եւ զորացնում է ճշմարիտ հայի հոգին, այն լցնում նոր հույսերով, լավատեսությամբ եւ խանդավառում հայրենասիրության ու ազատասիրության ոգով: